ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» նոյեմբերի 2011թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Երևան քաղաքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը /կցվում է/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում։
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին։
3. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ա. Տիգրանյան փողոցի հ.38 հասցեում գտնվող բնակելի մասնաշենքը /կցակառույցը/ նվիրելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N252-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին։
4. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին։
5. Երևան քաղաքում տեղական տուրքերի և վճարների 2012թ. դրույքաչափերը սահմանելու մասին։
6. Գույք ընդունելու մասին։
7. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին։
8. Գույքը նվիրաբերելու մասին։
9. Երևանի քաղաքապետի 2011 թվականի նոյեմբերի 7-ի հ.5323-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին։
10. Երևանի և Փարիզի քաղաքապետարանների միջև բարեկամության և համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին։
11. Երևանի քաղաքապետի 2011 թվականի հոկտեմբերի 12-ի N4733-Ա որոշումը հաստատելու մասին։